ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2023 թվականի N 2190 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 336-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-457-Ն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով և 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետության վերադարձող (այդ թվում՝ հարկադիր վերադարձող) քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագրի մասին» N 336-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) վերնագրում «Հայաստանի Հանրապետության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետություն» բառերով:

2. Որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 9-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Խնամքի տրամադրում: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին, սոցիալական կարիքին համապատասխան, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամք ստանալու նպատակով ուղղորդում՝

ա. կկազմակերպվեն առանց ուղեկցության վերադարձած անչափահասներին և Հայաստանում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին օդանավակայանում և սահմանի այլ անցման կետերում դիմավորելու, համապատասխան հաստատություններում նրանց հետագա խնամքը կազմակերպելու հարցերը,

բ. կկազմակերպվեն տարեց, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համապատասխան խնամքի հաստատություններում նրանց հետագա խնամքը կազմակերպելու հարցերը:».

2) 12-րդ կետում «Հայաստանի Հանրապետության միգրացիայի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը՝ ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն)» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն)» բառերով.

3) 19-րդ կետի 4-րդ ենթակետում «հաշմանդամության կարգ» բառերը փոխարինել «հաշմանդամություն» բառով.

4) 20-րդ կետում առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեց, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձինք, առանց ուղեկցության վերադարձած և Հայաստանում առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, իրենց սոցիալական կարիքի համապատասխան, ենթական են բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամքի տրամադրման:».

5) 21-րդ, 22-րդ և 23-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«21. Ծառայության աշխատակիցը հարցազրույցի կամ դիմողի ներկայության անհնարինության դեպքում ուղարկված փաստաթղթերի միջոցով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության օգնությամբ 3 աշխատանքային օրվա ընթացքում վեր է հանում բնակչության սոցիալական պաշտպանության կամ կացարանով ապահովման հաստատություններում տեղավորվելու խնդիր ունեցող անձանց կարիքները:

22. Ծառայության աշխատակիցն անձի՝ բնակչության սոցիալական պաշտպանության կամ կացարանով ապահովման հաստատությունում տեղավորվելու կարիքը վեր հանելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում կազմում է դիմողի անձնական գործը՝ կցելով նրա կարգավիճակը հավաստող առկա բոլոր փաստաթղթերը:

23. Դիմողի անձնական գործը կազմելուց հետո 3-օրյա ժամկետում անձն ուղղորդվում է համապատասխան հաստատություն:».

6) 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25. Ծառայության աշխատակիցն առանց ուղեկցության վերադարձած անչափահասներին և Հայաստանում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ օդանավակայանում դիմավորելու անհրաժեշտության մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը և համապատասխան խնամակալության և հոգաբարձության մարմնին վերջինիս (վերջիններիս) վերադարձից առնվազն մեկ շաբաթ առաջ նախապես ուղարկված գրության միջոցով, որի մեջ նշվում է վերադարձի օրը, ամիսը, չվերթի համարը և վերադարձողին առնչվող առկա տեղեկատվությունը: Դիմավորումից հետո առանց ուղեկցության վերադարձած անչափահասների և Հայաստանում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հետագա խնամքը կազմակերպում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:».

7) 49-րդ կետում «խնամքի կենտրոններում և համապատասխան» բառերը փոխարինել «բնակչության սոցիալական պաշտպանության և կացարանով ապահովման» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Միգրացիայի և քաղաքացիության ծառայության քաղաքացիական ծառայության պաշտոններում վերապատրաստման արդյունքներով պաշտոնների նշանակման վերջին օրվան հաջորդող աշխատանքային օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ